

**ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Հ. Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Պետության մեջ անձի իրավական կարգավիճակը բնութագրող հատկանիշներից մեկի՝ քաղաքացիություն ունենալու հանգամանքը ինքնին հանդիսանում է այն հիմնական նախապայմանը, որի շնորհիվ տվյալ պետության օրենսդրությամբ անձին վերապահվում են իրավունքներ ու ազատություններ և դրանց արդյունավետ պաշպանության երաշխիքներ:

Պետության և անձի միջև ձևավորվող որոշակի կապերի ու հարաբերությունների համակցությամբ է պայմանավորված անձի իրավական կարգավիճակը: Ընդ որում, յուրաքանչյուր պետության մեջ քաղաքացիների իրավունքների, ազատությունների և պարտականությունների համակցությամբ, ինչպես նաև անձի և պետության իրավունքների ու պարտականությունների սերտորեն փոխկապակցվածությամբ է պայմանավորվում հասարակական հարաբերությունների ողջ կարգը, որը, քաղաքացիության հետ մեկտեղ, կազմում է անձի իրավական դրության բաղկացուցիչ տարրը: Այս առումով տեղին է մեջբերել չինական ժողովրդական այն իմաստուն խոսքը, ըստ որի՝ «իրավունքների զգեստը կարվում է պարտականությունների աստառի վրա»:

Չինաստանում քաղաքացիների իրավական դրությունը համապատասխանում է հասարակության սոցիալ-քաղաքական կառուցվածքին, դրանում գերիշխող սեփականության ձևերին, արտադրության և բարիքների բաշխման սկզբունքներին, իշխանության քաղաքական կազմակերպման ձևին, ազգային-պատմական առանձնահատկություններին:

Որպես մարդու իրավունքների ապահովման կարևոր նախադրյալ հանդես է գալիս քաղաքացիությունը, որն առաջին հերթին պայմանավորում է նրա սահմանադրական իրավունքների ու ազատությունների ձեռքբերումը և իրականացումը:

Չինաստանի ժողովրդավարական Հանրապետության (ՉԺՀ) սահմանադրական իրավունքում քաղաքացիության տիրույթում արտահայտվում են մարդկանց, հասարակության և պետության միջև առավել կարևոր հարաբերությունները, իսկ նրանց փոխադարձ իրավունքները և պարտականությունները հանդիսանում են քաղաքացիություն ունենալու փաստի գլխավոր իրավական հետևանքներից մեկը և կազմում են մարդու և պետության միջև քաղաքական-իրավական կապի բովանդակությունը:

Քաղաքացիության ինստիտուտը Չինաստանում առաջին անգամ նորմատիվ կարգավորում ստացավ 1929 թվականի «Քաղաքացիության մասին» օրենքով[2], որով չինական քաղաքացիությունը որոշվում էր ամենից առաջ հոր կողմից՝ «արյան սկզբունքով» և փաստացիորեն՝ անկախ երեխայի ծննդավայրից: Թեև նույն օրենքով նախատեսվում էր քաղաքացիության որոշման առանձին դեպքեր նաև «հողի սկզբունքով»: Հիշատակված օրենքն այդպես էլ իր կիրառու-

մը չստացավ: Անգամ, ՉԺՀ-ի կազմավորման պահից՝ 1949 թվականից և ընդհուպ մինչև 1980 թվականը քաղաքացիության հարցերն օրենսդրական մակարդակով այդպես էլ մնացին չկարգավորված¹:

«Քաղաքացիության մասին» նոր օրենքն ընդունվել է Ժողովրդական ներկայացուցիչների համաչինական ժողովի կողմից 1980 թվականի սեպտեմբերի 10-ին: Հիշյալ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ «Չինական ժողովրդական Հանրապետության բոլոր ազգությունների անձինք ունեն Չինաստանի քաղաքացիություն», ինչը չափից ավելի ընդհանուր ու անորոշ բնույթ ունեցող դրույթ է, որը ձևական առումով կոչված է արտացոլելու Չինաստանում բնակվող բոլոր ազգությունների իրավահավասարությունը:

Ամենայն հավանականությամբ, նույն այդ նպատակներին է ծառայում նույն օրենքի 17-րդ հոդվածը, որը հռչակում է. «Չինաստանի քաղաքացիության ձեռքբերման և քաղաքացիության դադարեցման ակտերը, որոնք տեղի են ունեցել մինչև սույն օրենքի հրապարակումը, մնում են ուժի մեջ», այն դեպքում, երբ քաղաքացիության ձեռքբերման և քաղաքացիության դադարեցման հարցերի օրենսդրական մակարդակով կարգավորող կանոններ մինչև 1980 թվականը առկա չէին:

«Քաղաքացիության մասին» 1980 թվականի օրենքը ելնում է այն կանխադրույթից, որ Չինաստանի քաղաքացիության հարաբերությունները սահմանվում են բացառապես ՉԺՀ իրավունքի նորմերով: Կապված չինական քաղաքացիության հարաբերությունների հետ՝ օրենքը չի պարունակում դրույթներ, որոնցով նախատեսվեին միջազգային իրավունքի կամ այլ պետությունների իրավունքի նորմերի կիրառման հնարավորություն:

Այսպես, նույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանվում է. որ «անձինք, որոնց ծնողները կամ ծնողներից մեկը Չինաստանի քաղաքացիներ են, և որոնք ծնվել են Չինաստանի տարածքում՝ համարվում են Չինաստանի քաղաքացիներ»: Միաժամանակ, 5-րդ հոդվածը հռչակում է, որ «անձինք, որոնց ծնողները կամ ծնողներից մեկը Չինաստանի քաղաքացիներ են, և որոնք ծնվել են այլ երկրի տարածքում՝ համարվում են Չինաստանի քաղաքացիներ»:

Հիշյալ դրույթների վերլուծությունից հետևում է, որ ՉԺՀ քաղաքացիության մասին օրենքը նախատեսում է «արյան իրավունք» սկզբունքի գերակայող մշակությունը ինչպես երկրում, այնպես էլ նրա տարածքից դուրս: Միաժամանակ, ՉԺՀ-ի քաղաքացի են ճանաչվում այն անձինք, որոնք ծնվել են Չինաստանում և մշտապես բնակվում են Չինաստանի տարածքում, որոնց ծնողները հանդիսանում են քաղաքացիություն չունեցող անձինք կամ էլ ապացույցներ չունեն որևէ քաղաքացիության առկայության մասին (հոդված 6): Այսինքն, եթե օրենքն արտացոլում է արյան սկզբունքի զուգակցումը հողի սկզբունքի հետ, ապա այնտեղ, որտեղ արյան սկզբունքը չի կարող կիրառվել, գործում է հողի սկզբունքը:

¹ Այս օրենքի ընդունման երկարատև ժամանակահատվածը ենթադրվում է, որ պայմանավորված է եղել Տայվանի, Սյանգանի և Աոմենյայի խնդիրների առկայության հետ: Բնականաբար, չինական իշխանության, այսպես կոչված, «Միասնական Չինաստան» խնդրի լուծման ձգտումներն ուղղված էին նաև հենց միասնական չինական քաղաքացիության իմստիտուտի ստեղծմանը, ինչը միասնական պետության կարևորագույն և առանցքային հենասյուներից մեկն էր:

Ժամանակակից չինական քաղաքացիության ինստիտուտի հիմնական առանձնահատուկությունը հանդիսանում է օրենքի 3-րդ հոդվածով ամրագրված՝ երկքաղաքացիությունը չճանաչելու սկզբունքը: Այն զուգակցվում է 9-րդ հոդվածի դրույթների հետ, համաձայն որի՝ «այլ երկրի տարածքում մշտապես բնակվող՝ Չինաստանի քաղաքացիները կամավոր կերպով օտարերկրյա քաղաքացիության ձեռք բերելու դեպքում զրկվում են Չինաստանի քաղաքացիությունից»: Նախկինում ևս քաղաքացիության բնագավառում չինական քաղաքականությունն ընդհանուր առմամբ ուղղակի արգելում էր երկքաղաքացիությունը [2], թեև, մյուս կողմից, այդպիսի արգելքը չէր կարող կրել մշտական բնույթ, ինչը պայմանավորված էր արտասահմանում «չին հայրենակիցների» (խուացյառներ) հատուկ վիճակին սատարելու անհրաժեշտությամբ²: Այսինքն, «խուացյառները» ոչ միայն օգտվում են չինական պետության պաշտպանությունից, այլև իրենք են հանդիսանում Չինաստանի պետական շահերի ակտիվ ջատագովներ: Չինաստանում, փաստացիորեն, երկքաղաքացիությունն իրենից ներկայացնում է իրավական չկանոնակարգված վիճակ (անոմալիա):

Միաժամանակ, «Քաղաքացիության մասին» 1980 թվականի օրենքի դրական կողմն այն է, որ այն փաստացի բացառում է քաղաքացիություն չունենալու դեպքերը: Այսպես, չինական օրենսդրությամբ տեսականորեն երկքաղաքացիությունը չճանաչելը չի բացառում դրա առաջացման դեպքերը, սակայն նույն օրենքի 5րդ հոդվածը բովանդակում է դրույթ՝ ուղղված երկքաղաքացիության գլխավոր պատճառներից մեկի վերացմանը. «Անձինք, որոնց ծնողները կամ ծնողներից մեկը հանդիսանում են մշտապես Չինաստանի սահմաններից դուրս բնակվող՝ Չինաստանի քաղաքացիներ, և որը այլ երկրի քաղաքացություն է ձեռք բերել ծննդով, չի համարվում Չինաստանի քաղաքացի»:

Այլ կերպ ասած՝ չինական կողմը տվյալ դեպքում ընտրել է քաղաքացիության ձեռքբերման պարզ և միաժամանակ ժամանակակից մեթոդ, այն է՝ երեխայի օտարերկրյա քաղաքացիության ձեռքբերման եղանակը չի կարող էական նշանակություն ունենալ չինական քաղաքացիություն ունենալու համար, մյուս կողմից, ծնողների (կամ նրանցից մեկի) տարագրման և երեխայի՝ ծննդով օտարերկրյա քաղաքացիության ձեռքբերման զուգակցումն ուղղակի խոչընդոտ են հանդիսանում ՉՉՔ քաղաքացիության «ժառանգման» համար:

Հարկ է նկատել, որ «Քաղաքացիության մասին» օրենքը չի կարգավորում երեխաների (այդ թվում, օտարերկրյա քաղաքացիություն ունեցող)՝ քաղաքացիություն ձեռք բերելու կամ այն փոխելու, Չինաստանի քաղաքացիների կամ օտարերկրացիների կողմից նրանց որդեգրելու հետ կապված հարաբերությունները: Այսինքն, որոշակիացված չէ երեխաների քաղաքացիության կարգավորման կարգը՝ ծնողների կամ նրանցից մեկի քաղաքացիությունը փոխելիս:

Հիշյալ հարցերը ոչ պակաս կարևոր նշանակություն են ձեռք բերում չինական իշխանությունների կողմից հռչակված՝ երկքաղաքացիությունը չճանաչելու սկզբունքի իրացման համատեքստում, քանի որ նման դեպքերում շատ հավանա-

² Հարավ-արևելյան Ասիայի երկրներում խուացյառների ընդհանուր թվաքանակը գերազանցում էր 40 միլիոնը: Միաժամանակ, հարկ է նկատել, որ Ինդոնեզիայում և Մալագիայում էթնիկ չինացիների տեսակարար կշիռը գերակշռող է ազգաբնակչության ընդհանուր կազմում:

կան է և՛ երկքաղաքացիության, և՛ ապաքաղաքացիության (ապատրիդիզմի) առաջացման հնարավորությունը: Այդ իմաստով, օրենքով սահմանված է միայն մեկ հանգամանք, այն է՝ 18 տարին չլրացած երեխաների՝ Չինաստանի քաղաքացիություն ստանալու, վերականգնելու կամ քաղաքացիությունը դադարեցնելու հարցերի առնչությամբ միջնորդում են ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչները (հոդված 14):

Օրենսդրությունը չի կարգավորում նաև Չինաստանի տարածքում գտնված կամ չապրող երեխաների քաղաքացիության հիմնախնդիրը, որոնց ծնողները հայտնի չեն: Ենթադրվում է, որ, միջազգային նորմերին համապատասխան, այդպիսի երեխաները կդիտվեն որպես Չինաստանի քաղաքացի:

Չինական քաղաքացիության ինստիտուտին բնորոշ են յուրահատուկ նորմեր օտարերկրացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց Չինաստանի քաղաքացիություն շնորհելու վերաբերյալ: Օրենքով չի նախատեսվում քաղաքացիություն շնորհելու մասին հարցի ինքնաբերաբար, այսինքն, միակողմանի լուծում՝ սոսկ շահագրգիռ անձի ցանկության ուժով: Նման դեպքերում սահմանվում է թույլտվության կարգ:

Քաղաքացիության ձեռքբերման հնարավորությունների հարցում օտարերկրացիները և քաղաքացիություն չունեցող անձինք իրավահավասար են: Օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված է, որ թե՛ մեկը և թե՛ մյուսը «կարող են ձեռք բերել Չինաստանի քաղաքացիություն՝ համապատասխան միջնորդություն հարուցելուց և այն բավարարելուց հետո, եթե նրանք պատրաստակամություն են ցուցաբերում պահպանել Չինական ժողովրդական Հանրապետության Սահմանադրությունը և օրենքները»: Եվ նույն հոդվածով սահմանվում են այն երեք պայմանները, որոնցից թեկուզ մեկին բավարարելու դեպքում կարող է այդ միջնորդությունը քննարկվել: Դրանք են՝ 1) անձը պետք է հանդիսանա Չինաստանի քաղաքացիների մերձավոր ազգականը, որում արտացոլվում է ընտանիքի շահերի պաշտպանության սկզբունքը, 2) նա մշտապես պետք է բնակվի Չինաստանում, որում արտացոլված է պետության հետ անձի փաստացի կապի սկզբունքը, 3) օրենքով նախատեսված «այլ պատշաճ հիմքեր»: Հարկ է ուշադրություն դարձնել, որ երրորդ պայմանով մեծ լիազորություն է վերապահվում քաղաքացիության մասին գործեր վարող մարմիններին, որի պարագայում առաջադրված այլ պայմանները կարող են ամենևին էլ որևէ նշանակություն չունենալ:

Միևնույն ժամանակ, երկքաղաքացիության չճանաչման սկզբունքի ուժով սահմանվում է, որ այն անձանց համար, որոնց միջնորդությունը ՉԺՀ քաղաքացիություն ստանալու մասին բավարարվում է, ապա այդ դեպքում չի պահպանվում օտարերկրյա քաղաքացիությունը (հոդված 8):

Այլ երկրի տարածքում մշտապես բնակվող Չինաստանի քաղաքացիները, այն դեպքում, երբ նրանք կամավոր կերպով ձեռք են բերել օտարերկրյա քաղաքացիություն, «Քաղաքացիության մասին» ՉԺՀ օրենքի 9-րդ հոդվածի ուժով կորցնում են Չինաստանի քաղաքացիությունը: Չինաստանի քաղաքացիության դադարեցման կանոնները և պայմանները սահմանված են օրենքի 10-րդ հոդվածով: Քաղաքացիությունը դադարեցնելու մասին միջնորդություն հարուցած անձինք պետք է լինեն օտարերկրացիների մերձավոր ազգականներ կամ մշտապես բնակվեն ՉԺՀ-ի սահմաններից դուրս, կամ ունենան «այլ պատշաճ հիմ-

քեր»: Այդպիսով, սահմանվում են քաղաքացիության ձեռքբերմանը հակառակ չափանիշներ:

Նույն օրենքի 12-րդ հոդվածին համապատասխան՝ առանձին հանրային ծառայողների (պետական ծառայողներ, զինծառայողներ) նկատմամբ քաղաքացիության դադարեցում չի կիրառվում, ինչը ենթադրում է, որ չինական իշխանությունները, անտարակույս, ղեկավարվել են պետական անվտանգության շահով: Իսկ այդպիսի արարքի կատարումը, ինչը հանգեցրել է ազգային անվտանգությանը վնաս պատճառելուն, ապա ՉԺՀ քրեական օրենսգրքի 109-րդ հոդվածի ուժով անձը պատժվում է ընդհուպ մինչև 5 տարի ժամկետով ազատազրկմամբ, իսկ ծանրացնող հանգամանքների առկայության դեպքում՝ 5-ից մինչև 10 տարի ժամկետով[3]:

Միաժամանակ, ի տարբերություն շատ երկրների քաղաքացիության մասին օրենսդրության, ՉԺՀ քաղաքացիության մասին օրենքը չի պարունակում քաղաքացիության դադարեցման արգելքներ այն անձանց համար, ովքեր պարտավորություններ ունեն պետական մարմինների առջև, չկատարված գույքային պարտավորություններ՝ հասարակական կազմակերպությունների և քաղաքացիների առջև, ինչպես նաև դատապարտյալների կամ պատիժը կրողների համար:

Ինչ վերաբերում է քաղաքացիության վերականգնմանը (քաղաքացիության ձեռքբերման մասնավոր դեպք), ապա օրենքի 13-րդ հոդվածը հռչակում է, որ նախկինում Չինաստանի քաղաքացիություն ունեցած և «հարգելի պատճառներ ունեցող» օտարերկրացիները կարող են միջնորդություն հարուցել դրա վերականգնման մասին, միաժամանակ սահմանելով, որ ՉԺՀ քաղաքացիությունը վերականգնած անձինք չեն պահպանում օտարերկրյա քաղաքացիությունը: Ըստ երևույթին, քաղաքացիության վերականգնումը քաղաքական նպատակահարմարության տեսանկյունից ենթադրվում է, որ այն ուղղված է առաջին հերթին նախկին չինական քաղաքացիների հայրենադարձության խթանմանը:

Ի տարբերության շատ երկրների, որտեղ քաղաքացիության շնորհման, դրա դադարեցման և վերականգնման լիազորությունը վերապահված է բացառապես պետության գլխին կամ պետական իշխանության բարձրագույն մարմիններին, Չինաստանում խնդրո առարկա հարցերը քննության են առնվում ՉԺՀ Հասարակական անվտանգության նախարարության կողմից, որը նաև համապատասխան վկայականներ է տալիս քաղաքացիություն ստացած անձանց (հոդված 16): Այսպիսով, քաղաքացիության ինստիտուտի ոլորտում առաջնությունը բացահայտորեն տրվում է ազգային անվտանգության ապահովմանը, իսկ մարդասիրության (հումանիզմի) և ժողովրդավարության սկզբունքները այդ խնդրում այնքան էլ առաջնային չեն:

Միաժամանակ, 1983 թվականին ՉԺՀ Քաղաքացիական վարչակազմի նախարարության կողմից հաստատվել է «Օտարերկրացիների հետ ամուսնության կանոնները»[4], որոնցով կանոնակարգվում են օտարերկրացիների հետ Չինաստանի քաղաքացիների ամուսնության հարցերը, ընդ որում, ՉԺՀ տարածքում այդպիսի ամուսնության գրանցումը թույլատրվում է այն դեպքում, եթե ամուսնությունը չի հակասում քաղաքացիության մասին օրենքին: Կանոնները նաև նախատեսում են ամուսնացողների կողմից մեծ թվով այնպիսի փաստաթղթերի ներկայացման անհրաժեշտությունը, որոնք վկայում են նրանցից յուրաքանչյու-

րի իրավական դրության մասին: Նույն կանոններին համապատասխան՝ օտարերկրացիների հետ ամուսնությունն արգելված է զինծառայողների, դիվանագիտական աշխատողների, հասարակական անվտանգության համակարգի, գաղտնի մարմինների աշխատակիցների և այն անձանց համար, ովքեր տիրապետում են գաղտնի բնույթի տեղեկությունների կամ պատիժ են կրում ուղղիչ-աշխատանքային հիմնարկներում:

Այսպիսով, վերլուծելով ՉԺՀ քաղաքացիության ինստիտուտը կանոնակարգող իրավական նորմերը, կարող ենք նկատել.

ա) Չինաստանում քաղաքացիության իրավական կարգավորումների առանձնահատկությունը բխում է առավելապես քաղաքական նպատակահարմարությունից, խնդրո առարկա բնագավառի առանցքային հանգամանքերն ամրագրելու անհրաժեշտությունից և որոշ դեպքերում մանրամասն կանոնակարգումից խուսափելու ձգտումից: Վերջին հաշվով, նման իրավիճակը վարչական իշխանություններին հնարավորություն է ընձեռել կոնկրետ անձանց քաղաքացիության մասին հարցերը լուծելիս՝ ղեկավարվել քաղաքական այս կամ այն նկատառումներով կամ ուղղակի խուսափել այդ հարցերի կանոնակարգումից:

բ) Ընդհանուր առմամբ, սահմանադրաիրավական տեսակետից քաղաքացիության չինական ինստիտուտը հանդիսանում է առաջադիմական, քանի որ այն գրեթե համապատասխանում է քաղաքացիության բնագավառը կանոնակարգող միջազգային իրավական ակտերով ամրագրված պայմաններին ու պահանջներին, և, միևնույն ժամանակ, ունի բազմաթիվ ընդհանուր աղերսներ զարգացած երկրներում համանման իրավակարգավորումների հետ:

գ) ՉԺՀ քաղաքացիության ինստիտուտը առանձին դեպքերում կրում է մարդասիրական և ժողովրդավարական բնույթ, քանի որ այն ուղղված է առավելապես ազգային անվտանգության ապահովմանը և այլ պետություններում ապրող չին հայրենակիցների հայրենադարձության սատարմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մանրամասն տես՝ Государственный строй Китайской Народной Республики, отв. ред. Л. Гудошников, М., 1988:

2. Տես **Цупанов А. С.** Государственный строй Китайской Народной Республики (конституционно-правовой аспект), Автореф. дисс. канд. юрид. наук, М., 2006, էջ 17:

3. Տես Уголовный кодекс (дословно: Наказательный закон) Китайской Народной Республики // Народный ежедневник. 21 марта 1997 г:

4. Մանրամասն տես՝ Китайская Народная Республика: Конституция и законодательные акты. Пер. с китайского. Под ред. Л. М. Гудошникова. Сост. К. А. Егоров, М.: Прогресс, 1984, էջ 138, 224:

ОСОБЕННОСТИ ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ ГРАЖДАНСТВА В КИТАЙСКОЙ НАРОДНОЙ РЕСПУБЛИКЕ

Г. А. Хачатрян

В представленной работе рассмотрены особенности и правовая природа гражданства в контексте Конституции Китая 1982 года. Дано определение гражданства как основного элемента конституционного статуса гражданина КНР. Исследованы особенности гражданства с конституционно-правовой точки зрения, а также определены проблемы, стоящие на пути совершенствования этого института.

FEATURES OF THE LEGAL REGULATION OF CITIZENSHIP IN PEOPLE'S REPUBLIC OF CHINA

H. A. Khachatryan

In the present study examined the characteristics and the legal nature of citizenship in the context of the Chinese Constitution in 1982. A definition of citizenship as a basic element of the constitutional status of a citizen of China. The features of citizenship with constitutional and legal point of view, as well as identified challenges in the way of improvement of this institution.